



ԵՄ-Ն ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱԶԱԿՑՈՒՄ Ե ԶԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հետազոտությունները և նորարարությունները նպաստում են արտադրողականության բարձրացմանը, ավելի շատ աշխատատեղերի ստեղծմանը, մրցունակության բարելավմանն ու տնտեսական աճի խթանմանը: Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում ԵՄ-ն այս ամենը խթանում է «EU4Innovation» նախաձեռնության միջոցով, որն օժանդակում է տարբեր անհատներին, ուսանողներին, հետազոտողներին, ընկերություններին և կրթական հաստատություններին՝ ֆինանսավորելով բազմաթիվ բնագավառներում: ԵՄ-ն նաև համատեղ աշխատանք է տանում ազգային իշխանությունների հետ՝ հետազոտությունների և նորարարությունների տիրույթում գործընկեր երկրների արդիականացման և մրցունակության բարձրացման նպատակով:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ե ԶԱՍԱՆԵԼԻ

Ամբողջ տարածաշրջանում.

ՀՈՐԻԶՈՆ 2020

2018-2020թթ. ընթացքում շուրջ 30 միլիարդ եվրոյի ներդրումով՝ «Հորիզոն 2020»-ը հետազոտությունների և նորարարությունների ոլորտում ԵՄ-ի կողմից երբևէ իրականացված խոշորագույն ծրագիրն է:

Հայաստանը, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան ասոցացված են «Հորիզոն 2020» ծրագրին և դրան մասնակցում են միևնույն կանոնակարգերի ներքո, ինչ ԵՄ անդամ պետությունները: **Ադրբեջանը և Բելառուսը** ներկայացնող հետազոտողները նույնպես իրավասու են դիմել ֆինանսավորման համար:

ԵՄ-ի «Հորիզոն 2020» ծրագիրը ներառում է մրցութային հայտարարություններ տարբեր ոլորտների վերաբերյալ, այդ թվում՝

- գիտության գերազանցություն
- արդյունաբերական առաջնորդություն
- հասարակական մարտահրավերներ
- գերազանցության տարածում և մասնակցության ընդլայնում
- գիտությունը հասարակության հետ և հանուն նրա
- Նորարարությունների և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտ (EIT)
- Առոմային Էներգիայի եվրոպական համայնք (Եվրատոմ)

Երիտասարդները, ընկերությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, հետազոտողները և պետական մարմինները կարող են «Հորիզոն 2020»-ին հայտերի ներկայացման համար աջակցություն ստանալ «Ալֆ Պլյուս» **հարթակի** միջոցով՝ տարածաշրջանային մակարդակում, և «RI-LINKS2UA»-ի կողմից՝ Ուկրաինայի հետ երկկողմ մակարդակում:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքէջեր՝
www.ec.europa.eu/programmes/horizon2020
www.eap-plus.eu
www.ri-links2ua.eu

EaP CONNECT

ԵՄ-ի «EaP Connect» ծրագիրն ավելի քան 700 հաստատությունների միջև երկու միլիոն գիտնականների, ուսանողների և դասախոսների համար հասանելիություն է ապահովում համաշխարհային հետազոտական հարթակների նկատմամբ՝ գերարագ լայնաշերտ կապի միջոցով միմյանց փոխկապակցելով հետազոտական և կրթական համայնքները:

Այցելեք հետևյալ կայքէջ և պարզեք, թե որ համալսարաններն են միացել ցանցին՝
www.eapconnect.eu



**Գիտություն, տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն
և մաթեմատիկա ուսումնասիրող հայ ուսանողներ.**

ԵՄ-ն աջակցում է **գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի ուսումնասիրությամբ** զբաղվող ուսանողներին Հայաստանի ամբողջ տարածքի տարբեր համալսարաններից՝ իրենց մասնագիտական ոլորտում կիրառական գիտելիքներ և փորձ ձեռք բերելու նպատակով: ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում գտնվող Նոր «EU4Innovation» կենտրոնն առաջարկում է.

- **Գործնական սեմինարներ**
- **Նախագծային հրահանգներ**
- **Ժամանակակից հետազոտական հնարավորություններ**

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքէջ՝ www.tumo.org



Մոլդովական տարածաշրջանային ՏՐՏ կենտրոններ.

Կահույում և Բալթիում շուտով կբացվեն **Նորարարությունների և տեխնոլոգիաների** Նոր տարածաշրջանային կենտրոններ, որոնք **տեղական Նորարարական ստարտափերին և ձեռներեցներին** կօգնեն ամրապնդել իրենց կարողությունները: Կենտրոնները նաև կաշխատեն **միջազգային ՏՐՏ ընկերությունների ներգրավման ուղղությամբ**՝ Մոլդովայում ներդրումներ կատարելու նպատակով:

Կենտրոնները կաշխատեն նաև դպրոցների հետ՝ խթանելու գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի ուսումնասիրությունները, ինչը երիտասարդներին կօգնի **որակյալ աշխատանք** գտնել տանը՝ Մոլդովայում:



Վրացական ստարտափեր.

ԵՄ-ն աջակցում է Վրաստանի Նորարարությունների և տեխնոլոգիաների գործակալությանը՝ **օգնելու ստարտափերին**՝ ավելի լավ հասանելիություն ստանալ ներդրողների ֆինանսավորման նկատմամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքէջ՝ www.gita.gov.ge



Ուկրաինական ՓՄՁ-ներ.

ԵՄ-ի «**EU4Business**» նախաձեռնության շնորհիվ տեղական արժույթով վարկերը մատչելի են ՓՄՁ-ների համար: **Նորարար ուկրաինական ընկերությունները** կարող են ունենալ ավելի լավ պայմաններ և **տեղական արժույթով մատչելի երկարաժամկետ ֆինանսավորում** ստանալ: Վարկերը նպատակ ունեն աջակցել տեղական բիզնեսների կարողությունների զարգացմանը՝ Նորարարությունների ֆինանսավորման և հնարավորությունների ընդլայնման նպատակով:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքէջ՝ www.eu4business.eu/ua/ կամ կապ հաստատեք ձեր տեղական ProCredit Bank-ի հետ



«Ես մտադիր եմ արտասահմանում ձեռք բերված իմ ողջ գիտելիքներն ու փորձն օգտագործել հանուն մեր համալսարանի զարգացման»:

Գյուլատնտես, շրջակա միջավայրի մասնագետ և կենսաբանական գիտությունների դոկտոր **Արմինե Աբրամյանը** վերջերս Հայաստանի ազգային ազրարային համալսարանում ստեղծել է Միջազգային հետազոտական ծրագրերի համակարգման բաժինը: Նա աջակցություն է ստացել «ԱԼԳ Պլյուս» նախագծի կողմից, մասնակցել է «Հորիզոն 2020» ծրագրին և Նոր նախագծեր է մշակում՝ համալսարանի հետազոտողների կարողությունները զարգացնելու, ինչպես նաև գիտության, կրթության և բիզնեսի միջև կապի ամրապնդման նպատակով:



«Նմանատիպ ծրագրերը կանխում են «ուղեղների արտահոսքը»: Եթե ես չչափեի իմ առաջին դրամաշնորհը, հավանաբար կտեղափոխվեի արտերկիր, բայց այս կերպ ես հնարավորություն ստացա զարգանալ Ուկրաինայում»:

Գիտնական **Օլենա Ֆեսենկոն** ղեկավարում է Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի Միջազգային հետազոտությունների և Նորարարությունների բաժինը և արդեն վեց տարի համագործակցում է Եվրոպական հետազոտական ծրագրերի հետ: Նա համակարգում է Նորարարական կառավարման նախագիծը, որը «Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Ուկրաինա» կոնսորցիումի մաս է կազմում և նպաստում է գիտնականների ու գործարարների միջև շփումներին: «Որպեսզի գիտությունը լինի գործնական և կիրառելի, մենք պետք է շփվենք բիզնեսի հետ», - պնդում է նա: